# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

10 դեկտեմբերի 2013թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝
պարոն Ս.Սահակյանին

Ձեզ ենք ուղարկում՝Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի թիվ 11,12,13,14,15 որոշումները:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Ելք

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ... քարտուղարու- ... բաժին

«13» 12 2013թ.

Մուտք № 7/6668-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ՈՐՈՇՈՒՄ

14 նոյեմբերի 2013 թվականի թիվ

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54.1 հոդվածի համաձայն Արագածոտն համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինը քննարկեց համայնքի բյուջեի նախագիծը, համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը և որոշեց՝

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված բյուջեի նախագծին, համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերի, հաստիքացուցակների և աշխատակազմի թվաքանակի վերաբերյալ ներկայացված հավելվածներին:
2. Հավանություն տվեց համայնքի զարգացման քառամյա ծրագրին:
3. Վերոնշյալ նախագծերը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

Խորհրդակցական մարմնի կազմ

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

1. Մելսիկ Ղազարյան – համայնքի ղեկավար
2. Լորիս Ավետիքյան - ավագանու անդամ
3. Գայանե Զարոյան - ավագանու անդամ
4. Մուրադ Մխիթարյան - համայնքի բնակիչ
5. Հովհաննես Նաղդյան - համայնքի բնակիչ

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

09-ը դեկտեմբերի 2013թ. N 11

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ,10-րդ և 11-րդ հոդվածների պահանջով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2014թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Տ.Բրոյան

Թ.Միրզոյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 09 -ի N 11 որոշման

# ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ [redacted] դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ [redacted] դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ [redacted] դրամ:

**4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ** տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է [redacted] դրամ:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ. Ղազարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

09-ը դեկտեմբերի 2013թ. N 12

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2013-2016 ԹԹ. ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ 2014Թ. ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով Արագածոտն համայնքի ավագանին՝

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի զարգացման 2013-2016թթ. քառամյա ծրագրով 2014թվականին Արագածոտն գյուղական համայնքում կատարվող աշխատանքները համաձայն հավելվածի:

Ավագանիներ՝

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Տ.Բրոյան

Թ.Միրզոյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

հավելված

2014 թվականի քառամյա ծրագրով  2000000 ( երկու միլիոն ) ՀՀ դրամ նախատեսվում է կատարել Արագածոտն համայնքի գրասենյակի շենքի վերանորոգման համար:

Արագածոտն համայնքի ղեկավար՝  Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

09- դեկտեմբերի 2013թ. N 13

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով Արագածոտն գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արագածոտն գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի ամսեկան դրույքաչափը սահմանել 196.0( մեկ հարյուր իննսունվեց հազար ) ՀՀ դրամ:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Տ.Բրոյան

Թ.Սիրզոյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

09-ը դեկտեմբերի 2013թ. N 14

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով Արագածոտն համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արագածոտնի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Տ.Բրոյան

Թ.Միրզոյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբեր 09-ի N 14 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 13
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 195270 |
| Տեղակալ | 1 | 96680 |
| | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 108228 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 96680 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 96680 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 96680 |
| Սպասարկող անձնակազմ | | |
| Կոմունալ ծառ. սպասարկող | 1 | 59524 |
| Օպերատոր | 1 | 59524 |
| Մշակույթի տան պահակ | 1 | 59524 |
| Մանկապարտեզի պահակ | 1 | 59524 |
| Հավաքարար | 1 | 59524 |
| Գեղմասվար | 1 | 59524 |
| Գրադարանավար | 1 | 59524 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 13 | 1106886 |

Արագածոտն համայնքի ղեկավար Մ.Ղազարյան

13.12.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

09-ը դեկտեմբերի 2013թ. N 15

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ղեկավարվելով << օրենքի 16-րդ հոդվածով ու «Բյուջետային համակարգի մասին» << օրենքի 32-րդ հոդվածով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Արագածոտն համայնքի 2014թ. բյուջեն ՝ համաձայն կից հավելված 1-ով:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Տ.Բրոյան

Թ.Միրզոյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար Մ.Ղազարյան